

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒՄ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսական՝ 9 ռ., ինն և ութ ամսական՝ 8 ռ., վեց ամսական՝ 7 ռ., չորս ամսական՝ 6 ռ., երեք ամսական՝ 5 ռ., երկու ամսական՝ 4 ռ., մի ամսական՝ 3 ռ., երկու ամսական՝ 2 ռ., մի ամսական՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարսեղյան փողոցներ, անկիւն):
Ուրիշ քաղաքներէն պէտք է գիտնել այս հասցեն. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանէն՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Ներքոյի պատասխանը. Փաստերի յղաչում.
—ՆԵՐԿԱՅԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ. Ի՞նչ դէպքերում
պէտք է օգնել: Հոգեւորականութիւնը և նրա
նշանակութիւնը. Նամակ Ատուրապետի. Ներքին
լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ. Նամակ Թիւր-
քալայի. Նամակ Պարսկաստանի. Արտաքին
լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ԲՈՐՍՍ. —ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ռաշիդ:

ՆԵՐՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ռուսաց արտաքին գործերի մինիստր
Մուրաֆիւի շրջաբերականը՝ որով կայսր
Նիկոլայ II-ի կողմից պետութիւնները
հրաժարվում են կոնֆերանսի կազմել մի-
կտարիքով դէմ միջոցներ գտնելու համար,
ինչպէս պէտք էր սպասել, ոգևորված
համակրութիւն գտաւ թէ՛ Ներքինում
և թէ՛ Հրապարակի Ամերիկայում: Բոլոր
ազգերի լրագրները, առանց բացառու-
թեան, համաձայն են մի բանի մէջ—որ
խօսել օր օրի վրա մեծացող զինուորական
ծախսերի փաստակարգութեան մասին նշա-
նակում է կատարել մարդասիրական մի
մեծագործութիւն, որ շուտ չի մոռանալ
բարեբաւութիւնների կարօտ մարդկութիւ-
նը: Ռուսաց առաջարկութիւնը մի անոր-
ծելի անակնկալութիւն էր բոլոր ազգերի
համար. և այդ ազգերի մամուլը խորին
համակրանքով վերաբերվեց Պետերբուրգի
շրջաբերականին: Բայց ի՞նչ կը լինի այդ

ընդհանուր խնդակցութեան հետեւները:
Նրանք անպէս մի բան ասել այժմ, ի հար-
կէ, անկարելի է: Հարցը պիտի վճռեն
պետութիւնները, մարզիկ, որոնց ձեռ-
քով է գտնվում ազգերի ձեռնարկը:
Բայց եթէ նոյն իսկ ընդունենք, որ հա-
տարակական կարծիքն էլ իր ազդեցու-
թիւնն է անուշաբքաբանութեան վրա,
այդ դէպքում էլ չենք կարող ասել, թէ
ընդհանուր զինավթաման դադարեցրել մեծ
հաւանականութիւն ունի ներկայ րօպէին:
Ահա՛ թէ ինչու ենք այդպէս կարծում:

Մարդկութիւնը բարեբաւութեան պի-
տի հասած լինելը, եթէ ռուսաց առաջար-
կութիւնը՝ փոխանակ հրաժարելու և գո-
հունակութեան, յարուցանէր զայրոյթ,
անբաւականութիւն, անէծք: Այսպիսի ե-
րկոյթ տեղի ունենալ էր կարող ամենու-
նի ընդունում, որ լոյսը խաւարից լաւ է,
որ կեանքը մահից գերադասելի է. ամեն-
քէ՛ գոնէ առերես, հրապարակով, դաւա-
նում են, որ մարդկայնութեան սկզբունքը,
կողբայութիւնը, սէրը, համբաւելութիւ-
նը հրաշալի բաներ են: Բայց դժբախտա-
րէպէս այն է, որ սկզբունքները սկզբունք-
ներ են միայն: Մարդիկ ամեն օր ինկար-
կում են նրանց, զարդարում են զանազան
փառահեղ պաճուճանքներով, բայց երբ
գալիս է այդ սկզբունքներն իրականացնե-
լու, կեանքի մէջ մտնելու պահանջը, այն
ժամանակ առաջ է գալիս այն անասանք
մեծ անանկութիւնը, որին ենթարկված է

ժամանակակից մարդը միջազգային քա-
ղաքականութեան մէջ: Այդ անանկութեան,
փարիսեցիութեան փաստերը այնքան շատ
և խոր են, որ հարկաւորութիւն էլ չը
կայ փաստեր առաջ բերելու: Խօսենք ներ-
կայ դէպքի մասին:

Միկտարիքով այժմեան ահռելի կերպա-
րանքը, ինչպէս յայտնի է, սկսվեց այն
ժամանակից, երբ Ֆրանսիան ջարդվեց
գերմանական արշաւանքի տակ և կորցրեց
իր երկու նահանգները: Այն ժամանակից
այդ երկու անհաշտ թշնամիներն սկսեցին
պատրաստվել մի աւելի մեծ ընդհարման.
կազմվեց երեքպետեան դաշնակցութիւնը
Վերմանիայի նախաձեռնութեամբ, իսկ
Ֆրանսիան միացաւ Ռուսաստանի հետ:
Եւրոպական խաղաղութիւնը չէ կարող լի-
նել, քանի Ֆրանսիան և Վերմանիան ան-
խուսափելի չեն համարի ընդհարումն ա-
պագայում: Չլիսաթափութիւնը ամենից ա-
ռաջ այդ երկու պետութիւններից է կախ-
ված: Աւստի հետաքրքրական է իմանալ
թէ ինչպէս են նրանք վերաբերվում Ռու-
սաստանի առաջարկութեան:

Ֆրանսիական մամուլի գլխավոր օրգան-
ները բոլորովին չեն թագցնում, որ Ֆրան-
սիան չէ կարող յաւիտեանական մոռացու-
թեան տալ էլլաս-Լօտարինգիայի հարցը:
«Temps» կիսապաշտօնական լրագրին ա-
սում է. «Ֆրանսիան չէ կարող մոռանալ,
որ իրաւունքը և արդարութիւնը, ազգերի
իրաւունքները և մարդկային էականքի ի-
րաւունքները, որոնց չէ կարելի աճուրդով
ծախել կամ ուրիշ յանձնել իրրեւ անա-
սուն, այլ և յաւիտեանական արդարադա-
տութիւնը 1871 թ-ին ենթարկվեցին մի
յաղթահարման, որ մինչև այժմ չէ չըտո-
ված: Նոյն մարտը խօսում են և Ֆրան-
սիական ուրիշ յայտնի լրագրներ: Նը-
րանք էլ ասում են որ Ֆրանսիան դատ
ունի և այս հանգամանքը, ըստ երևոյթի,
մոռացել է նրա դաշնակցը: Բայց ի՞նչ են
ասում Վերմանիայում: Այնտեղ էլ չօվի-
նիստ լրագրները խօսում են, որ ռուսաց
առաջարկութիւնը կարող է կատարվել
միայն այն դէպքում, երբ ազգերի իրա-
ւունքները չեն ոտնահարվի: Դա նշանա-
կում է, որ Վերմանիան յաղթողի իրա-
ւունքով ձեռք է բերել էլլաս-Լօտարին-
գիան և ձեռք է բերել Վերմանիայի: Պարզ
է երկու հակառակորդների տեսնելիս, և

պարզ է, կարծում ենք, թէ ի՞նչ հետե-
ւանք կարելի է սպասել Ռուսաստանի
հրաւերից:

Կոնֆերանսիան կը կազմվի, այդ ասում
են ամենքը: Բայց արդեօք կաջողվի՞ հա-
մաձայնութիւն կայացնել: Յամենայն դէպս
քաղաքական ամենախոշոր դէպքը այն մար-
դասիրական հրաւերն է, որ ռուսաց ինք-
նակալն ուղարկեց աշխարհին: Քաղաքա-
կան աշխարհը պիտի կարողանայ պատուով
կատարել իր պարտականութիւնը, թէ
այս մարդասիրական մեծ կոչն էլ պէտք
է զոհվի քաղաքական խնդիրների և շա-
հասիրութեան...

ՓԱՍՏԵՐԻ ՅԵՂԱՇՏՈՒՄ

III

Պատրիարք Աղաբեան շատ լաւ դիտէ, որ
սերբերի, բուլղարների, չեխօգորցիների շար-
ժումները առաջ եկան թիւրքաց անտանելի
կարգերից: Միթէ այդ ազգերի մէջ ևս սահմա-
նադրութիւնն էր գործում: Միթէ բուլղարական
անգիւլի կոտորածները մի բանի «անմիտ» գոր-
ծողների գործունէութեան արդիւնք էր: Մենք
դեռ չենք խօսում այն մասին, որ անգիւլի
տարբերութիւն կայ բուլղարական և հայկական
կոտորածների մէջ: Բուլղարական կոտորածներից
առաջ, ճշմարիտ օր, երկրի մէջ յեղափոխական
շարժումն էր սկսել. բուլղար ժողովուրդը, ան-
կարող լինելով այլ ևս տանել թիւրքաց ճնշու-
մանը, որպէս էր կամ մեռնել կամ ազատվել.
բայց Թիւրքիայի հայերը մտքից անդամ չէին
անցկացնում ապստամբվել, երբ սկսեցին նը-
րանց անհաղթ կոտորել և շարքի: Թիւրքիայի
հայերը միայն աղերսում էին վերջ տալ իրանց
թշուառութիւններին, վերջ տալ թիւրքաց դժբ-
եւ ճիւղը աղաների կեղծութիւններին, միջոց տալ
խաղաղ կերպով, իրանց ձախտի դաւան բեր-
տնելով վաստակել իրանց օրական հացը, ա-
պահովեցնել իրանց կեանքը, գոյքը և պատիւը:
Ահա ինչ էին հայցում հայերը Թիւրքիայում.
Նրանք հայցում էին մարդկային ամենատարա-
կան իրաւունքներ և նրանց պահանջը այնքան
օրինական, արդար էր, որ եւրոպական մեծ
պետութիւններն անհրաժեշտ գտան առաջարկել
սուլթանին իրաւործել այդ պահանջը: Բայց
հէնց հայերի այդ արդար պահանջը կատարե-
ցրեց սուլթանին. «Ինչպէս է համարձակվում ու-
ղորմելի բայան պահանջ անել, ինչպէս է հա-
մարձակվում նա դիմել օտար պետութիւններին
և այդ դեպքով պատճառով մեծ փաղկաւը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԱՇԻԴ

(Պատկեր)

IV

Գարնանային գեղահրաշ առաւօտ էր: Մարա-
լայ սարերն ու ձորերը դեռ լողում էին վա-
ղորեան աղմուկի մէջ, և նրանց կանաչա-
գուր կատարները գծագրվելով երկնականաւոր
կապուտակ ֆօնի վրա, ասես ամպերի կոյտեր
լինէին: Կանաչապատ բլրակները շամանդաղի
միջից հաղւա նկատելի ստուերագծերով խիտ առ
խիտ իրար վրա կուտակված հակադաս հօտի
էին նմանում, որին հովիւի սքնդի ձայնը դեռ
չէր վերկայցրել առաւօտեան արօտի: Այս կա-
նաչազարդ լեռների, այս գեղանկար բլրակների
միջից մերթ երևալով և մերթ ծածկվելով հո-
տում էր գետակը, որովհետև վերաւոր օձի պէս,
որ երբեմն ցոյց էր տալիս իր փայլուն արծա-
թագոյն մէջքը, իսկ երբեմն կորչելով ձորե-
րի խորութեան մէջ, իր ներկայութիւնը յայտ-
նում էր խուլ խշխշուցով:

Մօտ էր արշալոյսը: Օրվայ այն ժամն էր,
երբ լեռ ու դաշտ, ծառ ու ծաղիկ, աղբիւր ու
առուակ նոցան, շունչները բռնած, անձայն, լուռ,
ասես վախենալով խանդաղել սքանչելի ներշնչա-
նակութիւնը, սպասում են ընտելեան այն հրա-

շաղկիւն, որ արշալոյս անունն է կրում: Փչում
էր առաւօտեան մեղմ, դուր ըսմին, օրօրելով
իրար տալով լեռների և հովիտների ծաղիկներն
ու խոտերը: Մարալայ սարերի թիկունքից դէ-
պի վեր, երկնքը շառագունվել էր արշալոյսի
նկարական գոյնով: Արեւի առաջին ոսկեգոյն
շողերը խորձ-խորձ թռան ընկած լեռների
կանաչապատ ցողազարդ կատարներին, ապա
հետզհետէ ցածրանալով պայծառ լուսով ողորե-
ցին ցողազարդ բլրակներն ու դաշտերը: Կանաչ-
ների աղմուկալիս փայլուն ցողերը գոլորշիա-
նալով նախ մի համատարած նուրբ շամանդա-
ղով ծածկեցին ամբողջ հարթութիւնը, ապա կա-
մայր կամայ շրջակայքը պարզվեց, արևի ոսկեայ
գունով բարձրացաւ ջինջ, կապուտակ ժպտուն
երկնականաւոր վրա: Տեսարանը սքանչելի էր:

Բայց այս բոլորը չէին դրաւում այն ձիւտ
երկրասարգին, որ սանձը իր ձեռնակ ձիւտ պա-
րանոցին դրած՝ հանդարտ գնում էր դէպի Մա-
րալայ սարերը: Դա Ռաշիդն էր: Տխուր էր ե-
րկրասարգը. ասես նա չէր տեսնում լեռների
ու դաշտերի կանաչազարդութիւնը, հրաշալի
արշալոյսն ու արեւածագը, չէր լսում քարափ-
ներում կվկվաղող կաքանների, դալկալող հա-
րիւրաւոր թռչունների քաղցր ձայները, որ միա-
խառնվելով գետակի խշխշուցի հետ՝ կազմում
էին մի քաղցր, մի ուշադրաւ համերգ:

Պարզ էր որ մի ծանր վիշտ ճնշում էր երի-
տասարդի սիրտը, ուր գուցէ այնքան խաւար
էր, որքան ամպամած գիշերը: ձախտի խոշոր

ծաղերը փայլուն ապագայից էին նրա ներքին
աշխարհի: Հաւատարիմ նոյնգը, կարծես զգա-
լով իր սիրով հոգեկան վիճակը, գոռաւանդ էր
նրան անհանգիստ անել, խանգարել, խուժել
նրա մտքերը և ուշադիր բնազդով քայլում էր
դաշտավայրերի միջով: Տխուր է Ռաշիդը, նրան
տանջում է Ձարէի սէրը. կտրել կաշխաղող
կապերը, մոռանալ սիրած աղջկան, հեռանալ
նրանից, նա չի կարողանում: Ընկճված կաճքն
այլ ևս ոչ չունի, բանականութիւնը լռել է.
նա իր սրտի և զգայականութեան ստրուկն է
դարձել. իսկ շարունակել գաղտնի տեսակցու-
թիւնները այս ամայի լեռներում, մինչև երբ, և
ինչով կը վերջանայ... Հեռանալը կրկնակի վը-
տանգաւոր է. եթէ ասիանցիները մի կերպով ի-
մանան, որ շատ հեշտութեամբ կարող է պա-
տահել, այն ժամանակ գործն առանց արիւնի
վերջանալ չէ կարող: Վերաւորված ասիանցիները
մահու գնով կառնեն իրանց բէկի աղջկան
հասցրած անարգանքի վրէժը և ով գիտէ, գուցէ
այդ պատճառով տուժի և իր հայրենի գիւղը:
Այս դեռ քիչ է. նա վերջին դէպքում հայրե-
նակիցներից դաւաճան անուանը կարծա-
նանայ:

Ահա թէ ինչ ծանր մտքեր էին պաշարել նը-
րան. երբ հառաւ Ատուռածածի բլրին, նա զը-
ռուր վեր բարձրացրեց, նայեց աւերակ սրբա-
վայրին և երկրազաւթութեամբ խաչակնքեց իր
երեսը. շարժեց ձիւտն և առաջ արշաւեց, որով-
հետ հեռու մի բլրի գագաթին կանգնած տե-

սաւ իր Ձարէին: Տխուր ճնշող մտքերը թողին
նրան, սիրած աղջկայ տեսքը լցրեց նրա սիրտը
մի անսահման բաւականութեամբ. նա մոռա-
ցաւ և՛ երկրաւ և՛ վտանգ և՛ ամօթ և՛ նախա-
տինքը: Ձարէն բլրի գագաթից դիմեց, յափշտա-
կել էր, նրան քաշում գրաւում էր, որպէս լու-
սաւոր փառուր ալիքների մէջ մոլորված նաւին:
Ռաշիդը թռչում պահում էր, ասես սիրոյ թևե-
րի վրա. ինչքն չէր տալ մի ժամ, մի րօպէ ա-
ռաջ գրկելու այն սքանչելի պատկերը:

Ահա նա վերջապէս սովորական ժպտի յե-
տնն է. քիչ յետոյ գալիս է Ձարէն. և նրանք
գրկախառնվում են և դուրգուրում իրար, որ-
պէս դոյզ աղանչներ:

—Ա՛խ, Ռաշիդ ջան, ինչքան վատ կը լինէր,
եթէ այսօր չը գայիր, աչքը ջուր կարողան մինչև
տեսայ քեզ. լաւ որ եկար, ասում է Ձարէն և
աւելի ու աւելի մօտ սեղմվում նրան և համբու-
րում Ռաշիդի ճակատն ու շրթունքները: Ապա
իր մեծ փայլուն աչքերը սեւեւելով նրա դէմքին,
նայում է երկար, շատ երկար սիրտառաջ հա-
յաքցելով, կարծես աշխատելով նրա դէմքի վրա
կարգալ նրա ներքինը, նրա սրտի գաղտնիքը:

Բայց յանկարծ նրա պարզ աչքերը պղտորվե-
ցին, արտասուքները կախվեցին նրա արտա-
նուքներից և նա հազիւ զսպելով իր հեկեկանքը,
ծածկեց իր դէմքը Ռաշիդի կրծքի մէջ ու կար-
ծես էլ չէր կամենում բաժանվել այնտեղից: Ռա-
շիդն սկզբում չը հասկանալով բանի էությունը,
աղջկայ արածը միմիայն գուրգուրանք համա-

պէտք է հաւատարմութիւններ կենտրոնացնել օտար լազարներէն կտրելու և օտար պետութիւնները պէտք է միջամտեն իր ներքին գործերին: Եւ անս յոյսաւ դժուար է միտք պատժել այդ յանդուր թայանքին ու պատժել այնպէս, որ նրանք չը կարողանան այլ ևս ձայն-ձայնութիւններ: Երբեք-Քեօսկում ծրագիր կազմակերպեց Սկովեց Սատանի կոտորածը, այնքան անուշիկ, անհատապաշտ, որ զարհուրելի ցնցում առաջ բերեց ամբողջ քաղաքակրթութեանը: Սուլթանը հերքեց նոյն իսկ եղբոր խնամքը: Նշանակեց միջադրական քննութիւն և չը նայելով, որ Բ. Կուսը ամեն հարգութեամբ ձգտեց ձգտարութիւնը թագցնելու, այդ ձգտարութիւնը երևան եկաւ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի պատուիրակներէն ձեռքով կազմակերպեց արձանագրութիւնը ապացուցեց, որ անմեղ երեխաներ, կանայք և աղջիկներ, զառաւեալ ծերունիներ կենտրոնացնել են սարսափելի տանջանքներէ՝ ոչնչարի նման մոլորվելով իրանց տներում, ապացուցեց, որ այդ թշուառները ոչ մի յանցանք և մեղ չունեն, բայց ասի որ բրտուհեալ էին և այս:

Սկզբում սուլթանը շատ մեծ երկիւղ կրեց, այնքան մեծ էր Եւրոպայի զայրոյթը, բայց երբ նա կարողացաւ անդամալուծել ընդհանրապէս ժողովի գործունէութիւնը, երբ քաղաքական պայմանները նպաստաւոր կերպով դասաւորվեցին և եւրոպական մեծ պետութիւններէ մէջ անհամաձայնութիւն ծագեց գործ դնելի միջոցների վերաբերմամբ, նա հասկացաւ, որ կարող է անպատիժ շարունակել իր գործը և կոտորածները վերսկզբից Տրապիզոնում, Երզրումում և, յաջորդաբար, ուրիշ տեղերում... Այս անգամ զիտաւոր պատճառ բերվում էր մահմէդական ֆանատիկոս ամբողջ գրգռում: Անս այդ ժամանակ սկսեցին հրատարակվել բազմաթիւ պաշտօնական և մասնաւոր բերդիւրներ, յոգեւորներ, գրքեր, որոնք ջանախնայ փաստերով ցոյց տուցին, որ հայերի կոտորածը ծրագրված է, որ նա արդիւնք է մի սխտեմատիկական քաղաքականութեան, որպէս զի միանգամ ընդ միշտ վերջ տրվի հայոց հարցին և Թուրքիան ազատվի նրանից:

Եթէ Ազաթեան պատրիարքը կասկածել է համարում այդ հրատարակութիւնները, բաւական է, որ նա դիմի միայն հայր Եսայիայի հրատարակած «Martyrologie Arménienne» բերդիւրին, որ ամբողջովին հիմնված է պատմական դոկումենտների վրա. բաւական է, որ նա դիմի անգլիական «Աստուր» բերդիւրին: Եւ այն ժամանակ նա ստիպված կը լինի խոստովանել, որ թիւրքահայերի աղետի պատճառ ոչ թէ ազգային Սահմանադրութիւնն է, ոչ թէ ազգային զրացման կարծիքն է, այլ թիւրքաց այն բեւեռներ, որ ժամանակակից քաղաքակրթութեան նախատիւնն ու ամօթն է կազմում: Եւ միթէ մեր դարի ամենաարդար և առաքինի պետական գործիչներից մէկը, մեծ Դաւիթբեկ թիւղ կը տար իրան այդ կոտորածների հեղինակին՝ ամեն մարդասպան անուշիկ լիքեղ, եթէ նա համոզված չը լինէր ստակալի ձգտարութեան մէջ: Եւ այս բոլորից յետոյ, ատան Արևիկայ կաթողիկոսը, թիւղ է տալիս իրան կեղծել ձգտարութիւնը, յեղաշրջել փաստերը և յանցանքը դնել

բելով, սկսեց քննադատ չոյել նրա խիտ սև մազերի հիւսերը, բայց յանկարծ դրաց իր կրծքի վրա նրա հեկեկանքն ու ցնցումները, նա դարձաւ և երկու ձեռքով բռնելով նրա դուրսը, բարձրացրեց նրան և երկար փորձող հայեացքով սկսեց նայել աչկայ առտառտացող դէմքին ու աչքերին: Զարէն տխուր էր, շատ տըխուր. արցունքները թափվում էին նրա սիրուն աչքերից և ողորում էին կարմիր, բորբոքված այտերը՝ դարձնելով նրան էլ աւելի դրաւիչ, էլ աւելի գեղեցիկ:

— Զարէ, դառնուկս, դու դարձ ունիս, տըխուր ես և ինձնից թափում ես. ասա, ինչ է պատահել քեզ. ձերոնք իմացել են...

— Ռաշիդ ջան, ոչինչ չի պատահել, հէնց այնպէս արտասովեցի, վատ եղաւ եմ տեսել տըխուր եմ: Երազիս դու նստել էիր մեր սեղանի վրա և դնում էիր մի ինչ որ շատ հեռու տեղ, մի սարի վրա վաղցի, բայց չը հասայ, դու գնացիր ու գնացիր: Զարթեցի՝ երազ էր, բայց տխրեցի. ասի ևս զոյժ փիս բան է, Ռաշիդ ջան, շատ փիս. բայց այդ թողնենք, մի բան հարցնեմ կամես...

— Այդ ինչ խօսք է. միթէ դու չը գիտես, որ ես քեզանից ոչինչ չեմ ծածկել:

— Ռաշիդ ջան, ուղիղն ասա, դու ինձ սիրում ես:

— Ինչ տարօրինակ ես այսօր, Զարէ, ինչ է պատահել քեզ, ինչու ես հարցնում. միթէ չը գիտես, որ ես քեզ կեանքիս չափ սիրում եմ:

— Սիրում ես, դէ երբեք:

հայերի վրա, Սահմանադրութեան վրա, անուշիկ լի ժամանակը կորեկաւ: Այդ տեսակ վարմունքի անուշիկ կորեկաւ չէ, այլ ուրիշ բան...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՇ ԴԵՊԵՐՏՈՒՄ ՊԵՏԻ ԵՕՆԵՆ

Միտանց վրա յաճախ կրկնող անբերրութիւնը վաղուց հրապարակի վրա է դրել ժողովրդին օգնելու խնդիրը. բայց օգնութեան ձեռքը մինչև այժմ չեն մշակված բաւարար կերպով: Յուշի ամսին տեղի ունեցած մի առանձին եղբակցութիւններ, որոնց հետ կարեւոր ենք համարում ծանօթացնել մեր ընկերացիներին: Այդ խորհրդակցութեան կարծիքով, նրա՝ պէտք է օգնել ոչ թէ ամբողջ ազգայնականութեան, որ վնասվել է անբերրութիւններից, այլ միայն նրա այն մասին, որ ապրուստի միջոց չունի. երկրորդ՝ նպատակ չը պէտք է տալ այն անձներին, որոնք աշխատութեան հասակում են. երրորդ՝ նպատակ չը պէտք է տրվի մինչև դաշտային պարագայներին սկսվելու ժամանակը, և չորրորդ՝ նպատակ չը նշանակելու միջոցին պէտք է անքան հաց տալ, որ բոլորովին կշտացնի կարօտներին:

Աշխատելու ընդունակ մարդկանց ցուցակից հանելն այն միտքն ունի, որ եղած նպատակները տրվեն իսկապէս անօգնական մարդկանց, որոնք միջոց չունեն իրանց ոյծերով հայկայից իրանց ապրուստը: Նոյն նպատակն ունի և այն սահմանափակումը, որ վերաբերում է նպատակի ժամանակամիջոցին, որովհետև հասակակազմութեան կայ, որ դաշտային պարագայներին սկսված ժամանակը բանաւոր մարդը կարող կը լինի որ և է գործ դնել իր համար և ստանալ վարձատրութիւն: Սակայն տեղական հանդամանքները կարող են այնպէս դատարարել, որ աշխատող մարդը, չը նայելով աշխատելու պարագային կանութեանը, գործ չի գտնի կամ դաշտային պարագայներին սկսված ժամանակը մասնաւոր գործ տուողներ չեն լինի: Այդ հանդամանքները նկատի են առնված և սահմանված է, որ տեղական կոմիտեները պէտք է յարմարվեն տեղական պայմաններին և թող տան բացառութիւններ այն անձանց համար, որոնք անկարող են մասնաւոր գործով ապահովել իրանց կարիքները: Ինչ վերաբերում է ամեն մի մարդու արվելը հայր բանակութեան, խորհրդակցութեան կարծիքով՝ դա պէտք է աւելացնել հինգ ֆունտով: Մինչև այժմ հաց փոխ տալու ժամանակ համարում էին իւրաքանչիւր ուտող վրա ամսական երեսուն ֆունտ, իսկ այժմ աւելի արդար և նպատակաւորաբար է համարվում ամսական երեսուն և հինգ ֆունտ հազվեւ, որպէս զի նպատակ ստացող կարողանայ կուշտ լինել, դոնէ ցամաք հացով:

Անկասկած լաւ կը լինէր, եթէ օգնութիւնը աւելի լայն ծաւալով լինէր և կարողանար քայքայված տնտեսութիւնը վերականգնել: Սակայն պետութիւնն այժմ հոգում է, որպէս զի կարողանայ հացինք այնքան նպատակ, որ մարդ գոնէ քաղցածութիւն և սով չը զգայ, իսկ երբ

— Վահ, չես հաստատում: Երբեք եմ քո և իմ արևով, երբեք եմ սրովս, որ ես քեզ սիրում եմ:

Աղջիկը կրկին խանդաղատանքով փախվելից երբեք մէջ է այնպէս եռանդով, այնպէս սիրով, ասես մէկը կար, որ գալիս էր խելու ներսից իր սիրածին, բռնի կերպով բաժանելու իրանից: Զարէն չարժանակում էր հեկեկալով լաւ:

— Զարէ, կույշ Ռաշիդը, աւելի ևս զարմացած և յուզված, դառնուկս, ասի ինչ է պատահել քեզ, եթէ մի բան կայ, ասա, եթէ ոչ, ինչու ես լալիս:

— Ռաշիդ ջան, լսի՛ր իմ խօսքին, արի փախչենք այստեղից: Թէ սիրում ես Զարէին, փախչի՛ր: Նրանք աշխարհի վրա, կրկնեց աղջիկը իր արտաստալից աչքերը՝ յամառութեամբ սեւեւելով Ռաշիդի աչքերին: Իմ երազը վատ է, ես վախեցում եմ, ես կը գամ քեզ հետ, տար ինձ, ուր կուգես, տար հեռու, շատ հեռու. այնտեղ, ուր ձեր ֆլաները շատ են ու հանգիստ են ապրում: Ես էլ ֆլան կը դառնամ և մենք կապրենք միասին. միայն չուտ, չուտ փախչենք, ազատ եմ քեզ, իմ աննման յոյժի:

— Ինչու համար դու այդ բանը միայն այսօր ասացիր, իսկ մինչև այժմ ոչ մի այդպիսի բան չես ասել, և ինչու ես լալիս. ասի ինչ է պատահել:

— Ես գուր տեղը դոչ չեմ տեսել երազումս, որ միանք քեզ կը սպանեն, հաւատաւ կը սպանեն. ես էլ չեմ սպրի, Զարէն առանց Ռաշիդի մի օր էլ չի սպրի. այ, փրկեմ էն սարի գլխից:

այդքանն ապահովված կը լինի, այն ժամանակ կարելի է երկրորդ քայն անել և օգնութեան չափը մեծացնել: Այդ գործում կարող են անշուշտ օգնութեան գալ և մասնաւոր նուիրատուութիւններ՝ լրացնելով այն նպատակը, որ տալիս է պետութիւնը:

ՀՈԳԵՐՈՒՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Խմբագրութեան)

II

Դասակարգերի դերը և գործունէութիւնը կախված է միշտ իր անդամների բնաւորութիւնից, հետևաբար ազատ դասակարգերի գործունէութիւնը և դերը դարերի ընթացքում չէ կառուցվում մի և նոյնը: Այլ է կասանքներում. հէնց սրանց կողմից և ժառանգականութեան հիմունքներից է առաջանում այն, որ որոշ յատկութիւններ՝ որոնք յատուկ էին դարեր առաջ ապրող պապերին, ժառանգապէս անցնում են թուրքներին: Ուրեմն ամեն մի կաստա, օրինակ՝ արիստոկրատիան միշտ իր պատմական կենսից ամեն մի շրջանում անփոփոխ պահում է իրան յատուկ առանձնապատկութիւններ, աւանդական արարիչները: Որովհետև ազատ դասակարգերի կազմակերպութիւնը, վերոյիշեալ կողմից և ժառանգականութեան հիմունքներից ազատ է, ուստի նա չէ կարող ունենալ անփոփոխ և անշարժութեան մասնավոր յատկութիւններ: Նոր անդամները բերում են իրանց հետ նոր հոգի, նոր գործունէութիւն: Հետևաբար, փոխեցէ մեր բոլոր այժման հոգեւորականներին, և դուք կը ստանաք մի այլ հոգեւորականութիւն, ազատ այն բոլոր վատ պակասութիւններից, որոնք կազմում են բուն այն պատճառը, որից առաջացել է մեր այժման արձամարանքն ու անբաւականութիւնը դէպի մեր այժման հոգեւորականութիւնը: Իսկ այս անբաւականութիւնը չափեր անգիտակցաբար տառնում են դէպի հոգեւորականութիւնն առհասարակ, տեսակին յատուկ պակասութիւնները վերաբերելով սեփական հակառակ լոյրիկայի պահանջներին:

Նոր հոգեւորականները կը կազմեն նոր հոգեւորականութիւն. իսկ նոր հոգեւորականութիւնը նոր դիրք կը բռնէ մեր հասարակութեան մէջ և նոր դեր կը կատարէ մեր կենսից: Սակայն այս ձգտարութեան հետ պ. Գ. Կ. համաձայն չէ: Եթէ մի օր և է հրաշքով, ասում է նա, մեր բոլոր ինտելիգենտները փարաջայ հաղնելու և վեղար դնելու լինելը, մեր հոգեւորականութիւնը ընդհանրապէս ընթացիկութիւնը: Նոր կարծիքով, դա մի անհեթեթութիւն է: Եթէ հոգեւորական դարձող ինտելիգենտները ձգտարիտ ինտելիգենտներ, այսինքն առաջադէմ և լուսաւոր անձնաւորութիւններ են, այդ ինտելիգենտութիւնը չէ կարող իրանց ցոյց չը տալ իր կոչման և գործունէութեան մէջ, որից անհրաժեշտ կերպով առաջ կը գայ այն բարեփոխում, որը այդպէս համոզված և դրականապէս մեքում է պ. յօդուածագիրը: «Մենք հակառակ ենք ինտելիգենտի հոգեւոր կոչմանը՝ նուիրվելու ոչ թէ այն պատճառով, որ ինտելիգենտ քահանայ կամ կղերական ևս հաւատարակ կը թաղվի, կը կորչի անութիւնների մէջ, այլ ուր նա աւելի վնաս

ինձի վրա կը գործէ: Եւ իսկ կարող եմ անել: Այն, Ռաշիդ, մերոնք կատարել են. մեր արձանագրում անցեալ օրը այնքան ծեծել էիր, որ տուն եկաւ թէ չէ մեռաւ: Այն ինչու ծեծեցիր նրան, հիմա ինչ կանէք մերոնց հետ: Լուր է եկել, որ ձեր պաշտպան Խութն էլ չիկիկներս աւելի են ու բոլորին կոտորել. մերոնք էլ այդ պատճառով այս գիշեր խորհուրդ արին մեր տան մէջ, որ ձեր գլուխ վրա յարձակվեն, կրակ տան ու կոտորեն. և նրանք կանեն. չը գիտես, որ արիւնքներին ձեռքը ճար ըլնի, ձեր երեսանքներն էլ կը մարթոնեն:

Մի չարագուշակ սարսուռ անցաւ Ռաշիդի մարմնով: «Թութն աւելի են, կոտորել են», կրկնում էր նա մտքի մէջ: Յիշուի սա մի սարսափելի դրոյթ: Արիւնքներն այժմ ինչ ասես կը կատարեն Բանտի գլխին: Պէտք էր շտապել գիւղ հասնել ժամ առաջ. պէտք էր ելլ մտածել:

Նա վեր կացաւ:

— Իսկ գիտեմ ես, Ռաշիդ, և չես ուզում փախչել ինձ հետ, ուրեմն դու ինձ չես սիրում, չէ որ մնաս, քեզ անպատճառ կը սպանեն. իսկ Զարէն առանց Ռաշիդի ինչպէս ապրել: Լսի՛ր ինձ, քո բախտն եմ ընկել, արի փախչենք, ոտքերդ ընկած արդարեւ եմ, ասաց աղջիկը լաւապէս և ծուկ չոքեց Ռաշիդի առաջ աղիտը արտասովելով:

Յուզված Ռաշիդը, ինչ անելը չիմանալով, մի օրով ապշած մնաց, ստուած նայելով իր ոտքերի տակ ցնցվող գեղահասակ աղջկան, որի

սակար կը հանդիսանայ, քան անկիրթը, երթադրելով միայն, որ փարաջայ հաղնել և կամ վեղար դնող ինտելիգենտը միակողմանի կը թուրքեան և զարգացման տէր է: Բայց այս վերջին կենտրոններն առաջ բերելով, պ. յօդուածագիրը չեղում է իր խօսքերից, բանի որ «միակողմանի» կը թուրքեան և զարգացման տէր անձնաւորութիւնը ձգտարիտ ինտելիգենտ չէ կարող համարվել. իսկ մենք ի նկատի ունենք միայն ձգտարիտ ինտելիգենտներին և ոչ թէ՛ զիպուսաւոր, բայց նեղաշայնաց մասնագէտ-արհեստագէտներին:

Պ. յօդուածագիրը պնդում է, թէ «բազմակողմանի կը թուրքեան և զարգացման տէր անհատը երբեք չի ստանձնի հոգեւոր կոչումը», պատճառ բերելով, թէ հոգեւորական ասպարէզը պահանջում է «կոմպրոմիսներ» ներքին համոզման և խղճի հետ: Օրինակի համար՝ թէ աւտուածաբանութիւնը և բնական գիտութիւնները երբեք իրար հետ չեն կարող հաշտվել: Նա մասնաւորացն է առնում մի բնական երևոյթի վրա (ծիածանի), պնդելով, որ սրա ժառանգական մասին տէրտէրի (դիպլոմատը թէ անդիպում մի և նոյն է) և կրկնում անհատի ունեցած համոզումները միանգամայն հակառակում են իրար: Բայց սա շատ անհիմն կարծիք է: Այս վարդապետ աստուածաբան այլ ևս այն յետամնաց կարծիքն չէ, թէ բնական երևոյթները բացատրելու համար պէտք է դիմել Աստուածայնին. այլ բնականաբար, նա կասէ՝ այդ բնական երևոյթները բացատրութիւնը պէտք է հարցնել բնագիտութիւնը և որոնել բնագիտութեան մէջ: Այս բանը կարող է յայտնի չը լինել միայն գիւղացի անդէտ տէրտէրին. իսկ ինտելիգենտ («բազմակողմանի» կը թուրքեան և զարգացման տէր անհատը) չէ կարող չը դաւանել այս համոզումները. նա կարող է հոգեւորական լինել, բայց ծիածանի բացատրութիւնը որոնել ֆիզիկայի մէջ: Աստուածաբանութեան և կրօնագիտութեան միակ աւարկան բարոյականութիւնն է: Բարոյագիտութեան և աստուածաբանութեան այդ սերտ կապակցութեան պատճառն այն է, որ մարդկութիւնը, սկսած նախապատմական ժամանակների վայրենիներից մինչև դարուս ամենախոր մտքի և անգիտական հանձարի տէր Լ. Կանտը, միշտ բարոյականութեան և նրա անձնային ստիպողականութեան ամենավերջին աղբյուր համարել է Աստծուն և Նրա կամքը, ի հարկէ Աստուած-գաղափարը զանազան կերպով հասկանալով: Այդ բանը մի համաձայնագրային հոգեբանական ձգտարութիւն է, որին որպէս ապացոյց կարող է ծառայել ընդհանուր մարդկութեան ամբողջ պատմութիւնը:

Մասն հին դարերում, կար ժամանակ, երբ թէ աստուածաբանութիւնը և թէ բոլոր գիտութիւնները սերտ կերպով կապված և միացած էին իրար հետ՝ կազմելով մի իմաստութիւն: Եւ մի և նոյն անձնաւորութիւնը (Իմաստունը) և՛ բուրձ էր, և՛ բնագետ, և՛ բանաստեղծ, և՛ օրէնսդէտ, և՛ բժիշկ, և՛ արհեստագէտ: Բայց հետզհետէ, Եվրոպայի ճիւղաւորման (դիֆֆերենցիացիայի) օրէնքի համաձայն, սկզբնական այդ միութիւնը, երկարվելով զարգացման պրոցեսին, խախտվում է, և նախկին միասնորվածը բազմվում, անջատվում է իրարից և ինքնուրույն

թիւրքերի վրա փուլած էին ճոխ սև մազերը, ապա նա յանկարծ ուշքը գալով կուսացաւ, քրնքաբար բարձրացրեց նրան և համբուրեց արտաստացող այտերը և դողդոջուն շրթունքները:

— Զարէ ջան, մի լաւ, հոգիս, ասաց նա. ինձ այնպէս հեշտ չէ սպանելու. Ռաշիդին սպանելը դժուար է: Մի խօսքիս վրա: Այն այժմ ես քեզ հետ ինչպէս փախչեմ: Ո՛ր խօսքով, եթէ նամակ ստորագրեցի չէ, յանձն կանեն այսպիսի վտանգաւոր ժամանակ թողնել իր հայրենի գիւղը, իր վախճանը կրակի մէջ և փախչել, ասի աշխարհ կը թըլ ինձ. միթէ դու կուգես, որ քո Ռաշիդին ամենքն էլ նամակը անուշիկս:

Ռաշիդի ոգեւորված ուշքը նրա դարձանքով և մի տաք համբուրող դրոյմնք նրա ճակատին հրաշալի համարյա էր դա. նրանք կրկին և կրկին կը լինի իմ անուշիկ, որ ես նրանց թողնեմ հաղար ու մի վտանգի ենթակայ:

Ռաշիդի ոգեւորված ուշքը նրա դարձանքով և մի տաք համբուրող դրոյմնք նրա ճակատին հրաշալի համարյա էր դա. նրանք կրկին և կրկին կը լինի իմ անուշիկ, որ ես նրանց թողնեմ հաղար ու մի վտանգի ենթակայ:

(Կը շարունակվի)

համեմատ: Այսպէս օրինակ՝ սեբեմբերի 2-ը ընկած էր զորքի դարձում են ցորձեր, ձիւղեր, տերմները և ծաղիկը, որոնք առաջ այդ հատիկի մէջ խառն միացման մէջ էին: Եւ այսօր մենք այլ ևս չենք տեսնում մի իմաստ ու լինում և մի իմաստ ու լինում, այլ հազար ու մի տեսակ գիտութիւններ և հազարաւոր գիտնականներ:

Բաւականաւորով՝ ճիշդաւորման օրէնքը այս համաստիս պարզաբանութիւնով, անցնենք աստուածաբանութեանը՝ առաջ բերելով ժողովրդական փիլիսոփայութեան և ասպարէզացած դրոշմները: Այս փիլիսոփայութեան հիմնադիրը Կոնֆուցիոսն էր: «Տեսական և գործնական բանականութեան ճիշդութիւնները» մէջ հիմնադրապէս ապացուցեց մտքի և խղճի, գիտութեան և հաւատի փոխադարձ անկախութիւնը մարդու հոգեկան աշխարհում: Հոգու այս երկու յատկանիւնները ունեն տարբեր յատկութիւններ, տարբեր բնաւորութիւններ, կարողութիւններ, ձգտումներ, որոնց համեմատ և տարբեր են նրանց բնաւորութեան միջոցները: Օրինակ՝ եթէ միտքը որոնում է ճշմարտութիւն և նրա դիմումը մէջ տեսնում է իր կոչումը, ստանում էր գոհացում: Խղճի համար նոյն դերը կատարում է բարիք՝ գործնական աշխարհում: Անկախ և ինքնուրոյն են մարդու մէջ մտաւոր և բարոյականը: Հոգեբանական էվոլյուցիան անջատում է (բայց ոչ թշնամացնում) գիտութիւնը հաւատից և բարոյականութիւնից: Այս լուրջ և կարեւոր խնդիրների վերաբերեալ դրոշմները՝ քննական փիլիսոփայութեան հիմքն են: Հաստատում է ճշմարտութիւնները, մենք հարկադրված ենք համառօտ կերպով մատնացոյց անել թէ՛ պէտք տրանք իրանց հետաքրքրութեամբ և կարեւորութեամբ արժանի են լուրջ ուսումնասիրութեան և պարզաբանութեան. բայց մենք բաւականաւոր ենք այս կարճատև բացատրութեամբ, չուզեալով շեղվել բուն առարկայից:

Գիտելիքն առնականութիւնը այս սկզբունքները դասակարգելով, կը հասկանայ, որ հոգեւորական դառնալով՝ նա հարկադրված չի լինի թշնամաբար վերաբերվել դէպի գիտութիւնը, մտքի ասպարէզը. նա իրան կը վերապահէ բարոյականութիւնը, խղճի աշխարհը: Անս թէ ինչի մէջ հարկադրված են բարոյականութեան դարձացում ունեցող հոգեւորականները. նրանք կը տարածեն ամբողջ մէջ աւելի յարգանք դէպի գիտութիւնը և նրա անկախութիւնը, իսկ միւս կողմից, այսինքն բարոյական տեսակետից աւելի լուրջ կը վերաբերվեն իրանց իսկական, բուն կոչմանը՝ աւելի և աւելի արդիւնատու դարձնելով իրանց գործունէութիւնը: Գիտելիքն հոգեւորականը չէ կարող, ի հարկէ, իր գիտաւոր պարտքը համարել Սաղմոս կարգալը, Շարական երգը, որովհետեւ նա գիտէ, որ այս տեսակ ծիսակատարութիւնները մի տեսակ տուրք են, որ նա պիտի վճարէ ժամանակակից և տեղական պայմաններին. և այս երկրորդական պարտաւորութիւնը չէ կարող ծածկել նրանից նրա առաջնակարգ պարտքը՝ բարոյականութիւն տարածել մեր նեխված և քարացած հասարակութեան մէջ: Եւ մի այս տեսակ հոգեւորականութեան ազդեցութեան տակ նոյն իսկ եկեղեցական ծիսակատարութիւնները հետզհետէ կը դառնան և վերոյիշեալ տուրքի ծանրութիւնը պակասելով՝ կոչնչանայ և կանխեալանայ: Եւ մենք չենք կասկածում, որ մի այդ տեսակ ինտելիգենտ հոգեւորականութեան դիրքը բարձրացած հասարակութեան մէջ կը լինի պարտաւոր և գործունէութիւնը՝ արդիւնատու: Նա կուսնայ ոչ թէ գիտնականի, այլ բարոյականի հեղինակութիւն:

Ս. Տիգրանեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Օգոստոսի 16-ին

Եթէ կամենանք այս անգամ խօսել մեր օրինորդների մասին և սրանց կենսաբան գրքի, կը ստանանք մի պատկեր, որ ընդունակ է հիասթափեցնել նոյն իսկ մեր գեղեցիկ սեռի մասին լաւ կարծիք ունեցողներին անգամ: Թէ՛ պէտք մեր օրինորդները թէ՛ կրթութեամբ և թէ՛ լուրջ բնաւորութեամբ աւելի բարձր են մեր երիտասարդներից, բայց և այնպէս շատ բաներում նրանց վրա դեռ ծանրանում է «խաւարը»: Ընդգծենք, օրինակ, նրանց վերաբերմունքը դէպի ամուսնական խնդիրները: Թէ ինչպէս են վերաբերվում այդ ծանրալի խնդրին մեր օրինորդները, այդ կերպ հետեւալ օրինակներից: Տեսնում էք, որ բոլորովին ազէտ մէկը առաջարկութիւն է անում մի կրթված օրինորդի և նրա այդ առաջարկութիւնը չի մերժում. մի գեղեցիկ, պարկեշտ, բայց չքաւոր ընտանիքի աղջիկ ընդունում է հասակաւոր հարուստ աղաթի առաջարկութիւնը, մի փեսացուի, որ մօտ

50 տարեկան է և կասկածելի անողջութեան տէր. մի երրորդը շատ լաւ գիտէ, որ իր փեսան իրանից առաջ անպատկել է մի ուրիշ օրինորդի, խօսք է տուել ամուսնանալու և խաբել է, բայց և այնպէս այդպիսի մէկի առաջարկութիւնը փոխանակ մերժմանը ընդունում է առանց տատանման. չորրորդը գիտէ, որ ամուսնացողը արեւոյդ է, այնու ամենայնիւ չէ մերժում և գնում է. իսկ փեսացուի անողջութիւնը տառաւորաբար տեղ է բռնում մեր օրինորդների աչքում: Եւ այդպիսի անհասկանալի ընտրութիւնները նկատվում են ամուսնացողների մեծամասնութեան մէջ: Բերած օրինակները միայն վերջին ամիսների նմուշներ են այն բազմաթիւ դէպքերից, որոնք շարունակ տեղի են ունենում մեր կենտրոնում: Չարքն զգալի կերպով կը թեթեւանայ, ի հարկէ, եթէ մեր օրինորդները մի քիչ ընդունակ հայեացքով վերաբերվէին այդ խնդրին: Բայց մենք տեսնում ենք հակառակը: Մեղաւոր օրինորդ՝ Բրքան կրթվի, Բրքան դարձաւ, դարձեալ առաջնակարգ տեղ նրա ամուսնական խնդրում բռնում է մի մօտիվ, որ պէտք է բոլորովին պարանախելի համարել: Դա փողի նախապատուութիւնն է: Մեր հարսնացուների ընտրելին ոչ թէ մարդն է իր արժանաւորութիւններով, բնաւորութիւնով և անողջութիւնով, այլ այդ մարդու քսակը: Այն փեսացուն է գերադասելի, որը հարուստ է: Իհարկէ դարձանում է, թէ ինչպիսի դեր է խաղում ըրտակ ամուսնական խնդրում: Կարելի է փողի նշանակութիւնը չը մոտել, բայց դրա համար դոնէ կենտրոն, երկտասարդութիւն, արհամարհել զգացմունք, դա անհասկանալի է: Անս այդ է պատճառը, որ մեզ մօտ տղամարդու մէջ դարձաւ, որ տեսակ մեծամտութիւն: Ոչ մի տղամարդ չէ սղասում, որ իր առաջնակարգութիւնը կը հանդիպի մերժման օրինորդի կողմից: Մենք այնքան սովորել ենք օրինորդներից մերժում չը տեսնել, որ եթէ այդպիսի մի դէպք տեղի է ունենում, խնդն զրգարվում է մեր հիւսնաւոր ինքնասիրութիւնը: Բոլորովին մոռանում ենք, որ եթէ տղամարդը իրաւունք ունի ընտրութիւններ անելու, նոյն իրաւունքից զուրկ չէ և օրինորդը: Որքան էլ այդ երկուքը մեր մէջ արմատացած լինի՝ մենք կարծում ենք, որ օրինորդները մի անգամ ընդ միշտ կուր յայտարարելով տղամարդկանց այդ հայեացքների դէմ, կարող էին սովորեցնել և հասկացնել, որ իրանք ապրանք չեն, որ իրանք էլ նոյն չափով ընտրութիւն անելու իրաւունք ունեն, որքան և տղամարդիկ: Օժտի բացակայութիւնը և չքաւորութեան ինքն իրանց նրանց չը պիտի վախեցնէ. հարկաւոր է սովորեցնել, որ աղիկայ արժանաւորութիւնը փողով չը պէտք է չափվի: Մենք առաջին բայը պահանջում ենք մեր փողի շատէ կրթված օրինորդներից: Ե. Սոլ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուսն ենք, որ կառավարական դպրոցների տեսչութիւնը մտադիր է սեպտեմբերից վերաբացել Թիֆլիսում հայոց մի քանի «եկեղեցական-ծիսական» դպրոցներ: Կը բացվեն այն փակված ուսումնարանները, որոնք նիւթապէս ապահովված են, ինչպէս Յովնանեան, Գալանեան և Թադեոսեան դպրոցները, մի դպրոց Հաւաքաբում, զուգէ նաև Նորաշէնի և Ս. Նշանի դպրոցները: Լուր կայ, որ Յովնանեան դպրոցը, որ մեծ եկամուտ ունի, կը մնայ ոչ թէ երկրպետան տարեկան դպրոց, այլ կը վերածվի աւելի մեծ դպրոցի: Դասաւորներին պէտք է նշանակի կառավարչական դպրոցների վարչութիւնը:

Օգոստոսի 25-ին Բաթում քաղաքը տօնեց ռուսաց տիրապետութեան տակ ընկնելու քսանհինգամեակը: Ինչպէս յայտնի է, 1878 թիւ օգոստոսի 25-ին, ռուսաց զօրքը մտաւ Բաթում և գրաւեց այդ քաղաքը: Այդ առիթով տեղական ռուս լրագիրը մի քանի տեղեկութիւններ է հաղորդում Բաթումի պատմական անցեալի մասին, որից բերում ենք հետեւալը. «Այժման Բաթումի տեղում, հռոմէական կայսրութեան ժամանակ, Բաթմա անունով մի քաղաք կար, որից և առաջ է եկել Բաթում անունը. յայտնի հետեւոր Դեմոսթենը, որ աղբիւր Քրիստոսից առաջ 450—413 թ., այդ քաղաքից էր: Քրիստոսի 70 թիւց՝ Բաթումը պատկանում էր հռոմէացիներին. ապա նա յաջորդաբար անցաւ վրաց թագաւոր Վախտանգին, նրանից հայերին, նորից վրացիներին, մինչև որ XX-րդ դարում օսմանցիների ձեռքն անցաւ: Երբ հարկի տարի օսմանցիների ձեռքին մնալուց յետոյ, ռուս թիւրքական պատերազմի վերջում, Բերլինի կոնգրէսի 58-րդ յօդուածի հիման վրա, Բաթումը մնաց ռուսների ձեռքում: Բաթումի բնակիչ-

ները թիւը 1807-ին—2,000 էր. 1867-ին 4,970. 1878-ին—2,000, իսկ այժմ՝ քաղաքի բնակիչների թիւը—30,000 է:

Մեզ հաղորդում են, որ Երևանի նահանգի երեք տեղում՝ Վաղարշապատում, Հին-Նախիչևան քաղաքում և Վաղարշու գիւղում բացվում են օդերևութաբանական կայաններ, որոնք պէտք է գտնվեն գիւղատնտեսական ինստրուկտորների հսկողութեան տակ:

Լուսն ենք, որ Թիֆլիսի բօստանիկական այգու կառավարիչ Գրիգորեւից թողնում է իր ներկայ պաշտօնը: Նրան կը փոխարինի ադրեոս Բոլոյի, որ ամառվայ ընթացքում կառավարում էր այգին:

Կիւղից հեռագրում են «Русскія Вѣдомостѣ» լրագրին օգոստոսի 21-ից. «Բնագէտների և բժշկիների համագումար ժողովը բացվեց այսօր, ժամ 1-ին: Ժողովի նախագահ՝ ընտրվեց պրոֆէսոր Բոնդուկ: Մասնակցող անդամների թիւը 1350 է: Ժողովը իր տրամադրութեան տակ ունի 18,000 ռուբլի»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են. «Քաղաքային վարչութիւնը մտադիր է մօցնել Շուշում երկրորդական լուսաւորութիւն: Մեր կարծիքով, քաղաքային վարչութիւնը մի քիչ շտապում է. երկրորդական լուսաւորութիւնից առաջ պէտք է մարքել քաղաքը անտանելի կեղտոտութիւնից և աղբից, պէտք է սալապատակել փողոցները, մի երկու սկզբնական դպրոցներ բանալ, առողջ, մաքուր ջուր հայթայթել բնակիչներին, գոնէ մի հատ օրինաւոր բաղնիք ունենալ, մի հատ քաղաքային հիւանդանոց և ձրի դեղարան բաց անել աղքատ աղաքանախութեան համար: Երկրորդական լուսաւորութիւն և ցեխով ու աղբով ծածկված, անանցանելի փողոցներ. որպիսի տեսարան»:

ԹԵԼԱԽԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 23-ին սիրողների խումբը ներկայացրեց Սոսնոկեանի «Ելի մէկ դու» կոմէդիան: Աչքի էր ընկնում իր խաղով տիկին Ե. Եւանդուկեան, որ ստացաւ մի ծաղիկաւոր: Միայն ի և Վանոյի՝ հակառակ տիպեր ներկայացնող այդ երկու անձանց դերը կատարեց պ. Եղօբեան: Պարոնը մեծ չնորք ունի Վանոյի և առհասարակ այդ տեսակ դերերի համար: Նրա կողմից մեծ սխալ էր Միքայէլի դերը յանձն առնելը, որ և նա կատարեց պաւկաս աղողութեամբ: Վատ չէր օր. Միլդիսեան: Օր. Եսարաւեան, որ հայերէն չը գիտէ, իր դերը չը փչարեց: Աղողութեամբ կատարեցին իրանց դերերը օր. Ս. Ալիագեան և մասնաւոր պ. Թաթումով: Միւս դերակատարները իրանց տեսչութեան էին, և ինչհամար տպաւորութիւնը լաւ էր: Հասարակութեան առանձին համակրութեան արժանացաւ Ս. Ալեքանդրեան՝ «Նախ մայրիկը» վոդվիլում: Պարոնը վաղուց յայտնի է մեր հասարակութեան իբրև թատրոնի ջերմ սիրող, որի անհատական ջանքերին ենք պարտական այն մի շարք ներկայացումները, որ տարվայ ընթացքում տրվում են ոչ միայն Թեւաւում, այլ և շրջակայ գիւղերում: Դանչլեմ լի էր»:

ԲԱԹՈՒՄ քաղաքը, ինչպէս հաղորդում են ռուս լրագիրները, դիմել է կառավարութեան, խնդրելով որ թող տրվի իրան՝ 600,000 ռուբլի փոխառութիւն կնքել օբլիգացիաների միջոցով և այդ գումարով կառուցանել Բաթումում շինութիւններ, զանազան կրթական հիմնարկութիւններ, քաղաքային հաստատութիւնների և բժշկարանի համար: Այդ միջնորդութիւնը յարգվել է մինիստրութեան կողմից»:

ԳՐՈՒՄ գաւառի Ախալքալաք գիւղից մեզ գրում են. «Ախալքալաքում և Չոլքում անաւտոնների հիւանդութիւնը թեթիւ անցաւ: Շատ կովեր և եղջերու լուսացանք բանալ օր պահելուց յետոյ դրանց վերադարձում էին տեղերին. իսկ սատկանների համար վճարվում էր մի որոշ գումար, որի մի մասը վերցնում էր անասնաբույժը... Հարան գիւղերը չը վարակվեցին, որովհետեւ իրանց գիւղացիները չէին թողնում, որ վերոյիշեալ գիւղերից անասուններ և սայլեր յարաբերութիւն ունենան իրանց գիւղի հետ»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 23-ին, կիրակի օրը, հայ դերասանական խմբի անդամները Վաղարշապատի եկեղեցում տարաբար յետոյ, հանդուրժեալ դերասան Գ. Թուրեանի լիւրատակին հոգեհանգիստ կատարեցին: Դերասան Վրդը, համառօտ ձառով գովեց հանգուցեալի բնական 38-ամեայ գործունէութիւնը և խմբի անդամների կողմից խորք ցատկացուցութիւն յայտ-

նեց Թուրեանի նման անփոխարինելի դերասանի կորստեան համար: Քաղաքացիներից շատ քերն էին ներկայ հոգեհանգիստին, չը նայած, որ դերասանական խումբը՝ տպագրած թերթիկներով՝ վաղօրօք յայտարարել և հրաւիրել էր քաղաքացիներին՝ հոգեհանգիստին ներկայ լինելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՑԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, օգոստոսի 10-ին

Արդէն գրած էի, թէ ֆրանսական կառավարութիւնը 1,200,000 ֆրանք կը պահանջէր սուլթանէն՝ իբրև հատուցում կամ փոխարինութիւն այն վնասներուն, զոր ֆրանսական հպատակներն ունեցան հայկական կոտորածի ժամանակ: «Aurore» այս առթիւ կը գրէ, թէ Հատուցի բարեկամ Կարմիր-սուլթանը բնաւ չընդունեց այդ գումարը վճարել, ինչպէս կընդգրկանայ նաև, Խալիլի, Անգլիայի և Միացեալ Նահանգաց կողմանէ այդ առթիւ եղած պահանջներուն: «Ինչու համար արդեօք»,—կը հարցունէ «Aurore»: «Պատասխանը շատ պարզ է—կրէ. —որովհետեւ զինուած երկուստարդ-թուրքերը, որ բնաւ դուր-դաւար չունեն և Արդուլ Համդի գործած ոճիւրներն ի վեր կը հանեն, Դաղդիլի, Անգլիայի և Խալիլի մէջ ապաստան գտած են: Կարմիր-սուլթանն անշուշտ պիտի ընէ այդ հատուցումը Ֆրանսայի՝ ինչպէս և մի և նոյն պահանջն ընող միւս ազգերուն, եթէ ասանք խիստ միջոցներ ձեռք անուոն երկուստարդ-թուրքերուն դէմ: Կաշառքի ամենէն աղտոտ տեսակն է այս»:

«Հանդէս Ամսօրեայի» մէջ կարդալու պատեհութիւնն ունեցանք Նորատուհնական վեմաշուքին փառաւոր կենսագրութիւնը՝ Արքայաւոր Ալիագեանի կողմանէ ի գիր առնուած, տեսանք նաև փառաւոր պատկերը՝ Նորին Վսեմութեան՝ իր Grand Uniforme-ով ու շողշողուն ջրանը՝ չաններով: Նորատուհնական վեմաշուք և տիրացու Արքայաւոր Ալիագեան, Uniforme մ'ալ այս չէ, պատկերացնելու համար 1900-ի Մեծ Արուեստահանդիսին մէջ...

Մեծ մարդիկներու խնչ անկում, որպիսի թեթեւաւորութիւն... ալ Ալիագեանին գործը՝ Գրեյս

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, օգոստոսի 15-ին

Գեարդաբաթ գիւղի հայերի մի մասի հետ ըրդերը թշնամութիւն ունենալով՝ սպանում են մի թիւրքահայաւատակ հայ, Մուրադ անունով, կրտսեր են Մուրադի... անդամը, հաջորդում են թիւրքի շորեր և դիակը դնում Գեարդաբաթ գիւղի մէջ ու յայտարարում, թէ Գեարդաբաթի հայերն են սպանել յիշեալ պարսկին: Մի պարսիկ կնոջ էլ կաշառում են և սովորեցնում, որ նա դատարան գնալով յայտնի, թէ սպանվածը իր ամուսինն է և հայերն են սպանել: Դատարանը, որպէս արեան դին, Գեարդաբաթի հայերից պահանջում է 300 թուման տուգանք: Օգոստոսի 14-ին մամուլն էր են ուղարկվում Գեարդաբաթ, որոնք գիւղի աղան փախած է լինում: Շահ-զադան Գեարդաթ գիւղում երեք օր իր ձիաւորներով ուսում, խմում է ժողովրդի հաշտ, յետոյ 30 թուման էլ տուգանք առնում ժողովրդից, որովհետեւ է Սիւլիւրդան գիւղի աղան փախել է... Անա կանչում է Սիւլիւրդան գիւղի աղան փախել էր ներքին և 40 թուման էլ իրանցից առնում, որովհետեւ Սիւլիւրդան էլ է այդ աղային Սիւլիւրդա-Ալի-խանին պատկանում: Այսպէս քաղաքը պաշտօնեան իր արշաւանքը շարունակում է Ձինիլա, Թամար և նրա շրջակայ գիւղերում...

Այդ դէպքերը մի քանի օր յետոյ նոյն Գեարդաթ գիւղի մի ասորի գանգաւորում է նոյն գիւղացի մի ուրիշ անորու դէմ և մամուր է բերում իր հակառակորդի վրա, որպէս զի իր դատը տանի: Մամուրը, անտեղի, պահանջում է գիւղի քեօխա Սարգիս Ալեքսանդրեանից կերակրել իր ձին. քեօխան հնազանդվում է և կատարում պահանջը. քեօխան կամենալով պաշտպան հանդիսանալ իր հարստանարված ժողովրդին, մամուրին ասում է. «Ինչու է Շահ-

